LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

# SMALL BUSINESS DISASTER RECOVERY FUND

## APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

## Ծրագրի և ծրագրին դիմելու ուղեցույց

Վերանայում՝ 05/08/25

# Կարևոր նշումներ սկսելուց առաջ

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

**Աղետներից հետո փոքր բիզնեսի վերականգնման հիմնադրամի դրամաշնորհային ծրագիրը** («**Ծրագիր**») ներկայացվում է Լոս Անջելեսի տարածքային առևտրի պալատի հիմնադրամի կողմից՝ դրա ադմինիստրատոր B.S.D. Capital, Inc. dba Lendistry-ի («**Lendistry**» կամ «**Ադմինիստրատոր**») միջոցով։

Ադմինիստրատորը կառավարում է Ծրագիրը Լոս Անջելեսի տարածքային առևտրի պալատի հիմնադրամի անունից և կարող է օգտվել երրորդ կողմի ծառայություններ տրամադրողներից՝ այս Ծրագրի հատուկ տարրերը կատարելու համար։ Ո՛չ Ադմինիստրատորը, ո՛չ դրա երրորդ կողմի ծառայություններ տրամադրողները չեն որոշում Ծրագրի շրջանակը, իրավասության չափանիշները, հաղորդակցման ռազմավարությունը կամ ժամկետները. ծրագրի բոլոր պահանջները սահմանվում են Լոս Անջելեսի տարածքային առևտրի պալատի հիմնադրամի կողմից։

**Տրամադրված տեղեկատու նյութերում նշված տեղեկատվությունը ենթակա է փոփոխման։**

**Տե՛ս Ծրագրի վեբկայքը, www.LAChamberRecoveryFund.com՝ ամենաարդի տեղեկատվության և հայտարարությունների համար:**

Աղետներից հետո փոքր բիզնեսի վերականգնման հիմնադրամի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը սահմանափակ է։ Հնարավոր է, որ իրավասության պահանջները բավարարող հայտատուների թիվը գերազանցի հասանելի միջոցները։ Դիմում ներկայացնելը, իրավունակության պահանջները բավարարելը և/կամ հաստատման ստացումը չի երաշխավորում, որ դուք կստանաք ֆինանսավորում։

Յուրաքանչյուր փոքր բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն իրավասու է այս Ծրագրից ստանալ միայն մեկ դրամաշնորհ։ Նույն փոքր բիզնեսի համար կրկնակի դիմումների ներկայացումը կհանգեցնի մեկ կամ մի քանի փոխկապակցված դիմումների հեռացմանը իրավասության դիտարկման գործընթացից, իսկ մնացած դիմումը կարող է չհամարվել ամբողջական՝ մինչև կրկնակի դիմումների խնդիրը չլուծվի։

Անձը կարող է դիմում ներկայացնել իրեն պատկանող մի քանի բիզնեսների և/կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար, որոնցում հանդիսանում են պաշտոնական ներկայացուցիչ կամ լիազորված ստորագրողներ։ Յուրաքանչյուր բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն պետք է բավարարի Ծրագրի իրավասության պահանջները։ Ստեղծեք նոր հաշիվ Lendistry-ի դիմումների պորտալի համար յուրաքանչյուր դիմումի համար։

Դրամաշնորհի դիմումները կդիտարկվեն կենդանի հերթի կարգով։ Կդիտարկվեն միայն ամբողջական և բոլոր պահանջվող փաստաթղթերով ներկայացված դիմումները։

# Ծրագրի համառոտ նկարագրություն

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Դիմումների ներկայացման ժամանակաշրջան

- **Դիմումների ներկայացման ժամանակաշրջանը սկսվում է՝ 2025 թվականի մայիսի 7-ին, 9:00 խաղաղօվկիանոսյան ժամանակով**

Մինչև վերջնաժամկետը թերի լրացված կամ չներկայացված դիմումները՝ ներառյալ պահանջվող փաստաթղթերը, **չեն** դիտարկվի դրամաշնորհի համար:

Խնդրում ենք ստուգել Ծրագրի վեբկայքը դիմումի վերջնաժամկետի վերաբերյալ ամենաարդի տեղեկատվության համար:

## Իրավասություն

Այս Ծրագրի համար իրավասու լինելու համար փոքր բիզնեսներն ու շահույթ չհետապնդող կազմակերպությունը պետք է համապատասխանի իրավասության հետևյալ **բոլոր** չափորոշիչներին.

1. Հայտատուի լիազորված ստորագրողը պետք է լինի առնվազն տասնութ (18) տարեկան դիմումի ներկայացման ամսաթվի դրությամբ.
2. Հայտատուի տարեկան եկամուտը 2023 թվականի համար պետք է լինի տասը միլիոն դոլար ($10 000 000) կամ պակաս.
3. Հայտատուն պետք է գրանցված լինի՝ Կալիֆոռնիա նահանգում օրինական բիզնես անելու համար՝ մինչև 2023 թվականի հունիսի 1-ը.
4. Հայտատուն պետք է ներկայումս բաց լինի և գործի Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետների ազդեցության և տարհանման տարածքում, կամ (բ) նախատեսի վերաբացել և վերսկսել գործունեությունը Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետի ազդեցության և տարհանման տարածքում.
5. Հայտատուն պետք է համապատասխանի հետևյալ **երկու** չափորոշիչներին. (ա) գտնվում է/էր Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետի ազդեցության և տարհանման տարածքում, և (բ) դրա բիզնես հաճախորդների բազայի 50%-ը կամ ավելին գտնվում է/էր Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետի ազդեցության և տարհանման տարածքներում, և
6. Միայն շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար. Հայտատուն պետք է գրանցված լինի որպես 501(c)(3) և լավ համբավ ունենա Կալիֆոռնիայի արդարադատության վարչության բարեգործական կազմակերպությունների և դրամահավաքների գրանցամատյանում:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Ծրագրի համառոտ նկարագրություն

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետի հետևանքների և տարհանման տարածք

Աղետներից հետո փոքր բիզնեսի վերականգնման հիմնադրամի դրամաշնորհային ծրագիրը կառավարվում է ստորև նկարագրված Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետի հետևանքների և տարհանման տարածքում («**Ծրագրի տարածք**») ծրագրային դրամաշնորհներ բաշխելու նպատակով: Այս ծրագրի նպատակների համար Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհի աղետի ազդեցության և տարհանման տարածքը ներառում է հետևյալ փոստային կոդերի սահմաններում գտնվող հասցեները.

| Փոստային կոդ | Քաղաք | Հրդեհ |
|---|---|---|
| 90049 | Բրենթվուդ | Փալիսեյդս |
| 90263 | Մալիբու | Փալիսեյդս |
| 90265 | Մալիբու | Փալիսեյդս |
| 90272 | Փասիֆիք Փալիսեյդս | Փալիսեյդս |
| 90290 | Թոփանգա | Փալիսեյդս |
| 91001 | Ալթադենա | Իթոն |
| 91023 | Մաունթ Վիլսոն | Իթոն |
| 91024 | Սիեռա Մադրե | Իթոն |
| 91011 | Լա Կանադա Ֆլինթրիջ | Իթոն |
| 91104 | Փասադենա | Իթոն |
| 91107 | Փասադենա | Իթոն |

## Միջոցների օգտագործում

Դրամաշնորհային միջոցները կարող են օգտագործվել միայն 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի աղետալի անտառային հրդեհների հետևանքով առաջացած՝ բիզնեսի հետ կապված ծախսերի համար:

## Դրամաշնորհի գումարները

Դրամաշնորհի գումարները կորոշվեն հայտատուի 2023 թվականին տարեկան համախառն եկամտի հիման վրա:

| 2023 թվականի եկամտի չափ | Իրավասու դրամաշնորհի գումար |
|---|---|
| $5 000 000 - $10 000 000 | $25 000 |
| $1 000 000 - $4 999 999 | $15 000 |
| $1 000 000-ից պակաս | $10 000 |

Աղետներից հետո փոքր բիզնեսի վերականգնման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը սահմանափակ է: Հնարավոր է, որ իրավասության պահանջները բավարարող հայտատուների թիվը գերազանցի հասանելի միջոցները: Դիմում ներկայացնելը, իրավունակության պահանջները բավարարելը և/կամ հաստատման ստացումը չի երաշխավորում, որ դուք կստանաք ֆինանսավորում:

# Ծրագրի համառոտ նկարագրություն

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Ոչ իրավասու բիզնեսներ

1. Կրոնական հաստատություններ՝ ներառյալ եկեղեցիները:
2. Պետական գրասենյակներ կամ գերատեսչություններ՝ բացի ամերիկյան բնիկ ցեղերից:
3. Յանրային առևտրային ընկերություններ:
4. Կորպորատիվ սեփականություն հանդիսացող ֆրանշիզաներ:
5. Ֆինանսական հաստատություններ, ինչպիսիք են բանկերը, վարկային կազմակերպությունները, «մինչև աշխատավարձի վճարման օրը» վարկ տրամադրող կազմակերպությունները, մեքենայի գրավով վարկ տրամադրող կազմակերպությունները, չեկերի կանխիկացման կետերը, այլ բիզնեսներ, որոնց գործունեությունը կապված է գումարների և հիփոթեքի հետ և այլ նմանատիպ կազմակերպություններ:
6. Ապահովագրական ընկերություններ՝ կապված կյանքի, ավտոմեքենայի, տան, գրավների հետ և այլ նմանատիպ կազմակերպություններ:
7. Բիզնեսներ, որոնք սահմանափակում են հովանավորչությունը տարիքից բացի ցանկացած այլ պատճառով:
8. Լոբբիստական ընկերություններ կամ բիզնեսներ, որոնք իրենց ժամանակի կամ ռեսուրսների 50%-ը կամ ավելին հատկացնում են լոբբիստական գործունեությանը:
9. Բիզնեսներ, որոնք ստեղծում են եկամուտ տեղական, նահանգային կամ դաշնային օրենքների խախտմամբ իրականացվող գործունեությամբ և կանեփի վաճառքի, մշակման կամ փոխադրման միջոցով:
10. Բիզնեսներ, որոնք գոյություն ունեն կուսակցական-քաղաքական գործունեությունն առաջ մղելու համար:
11. Բիզնեսներ կամ կազմակերպություններ, որոնք կամ որոնց սեփականատերերը, պաշտոնական ներկայացուցիչները, գործընկերները, տնօրենները և/կամ ղեկավարները ներկայումս հեռացված են, զրկված են լիցենզիայից, իրավասու չեն կամ բացառված են դաշնային, նահանգային կամ վարչաշրջանային օգնության ծրագրերին մասնակցելուց կամ դաշնային կամ նահանգային ֆինանսական կամ ոչ ֆինանսական օգնություն և/կամ նպաստներ ստանալուց:
12. Բիզնեսներ, որոնց սեփականատերը տասը տոկոսից (10%) ավելի բաժնեմաս ունի, կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ ցանկացած պաշտոնական ներկայացուցչով, ով համապատասխանում է հետևյալ չափորոշիչներից մեկին կամ մի քանիսին. սեփականատերը կամ շահույթ չհետապնդող կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչը նախորդ երեք տարիների ընթացքում դատապարտվել է, կամ սեփականատիրոջ դեմ կայացվել է քաղաքացիական դատավճիռ, կամ նրա նկատմամբ սկսվել է պայմանական վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի որևէ ձև, այդ թվում՝ մինչև դատավճիռը փորձաշրջան՝ խարդախության կամ քրեական հանցագործության համար՝ կապված դաշնային, նահանգային կամ տեղական հանրային գործարք կամ պայմանագիր կնքելու, կնքելու փորձի կամ հանրային գործարքի շրջանակներում դաշնային կամ նահանգային հակամենաշնորհային կամ գնումների կանոնադրության խախտման կամ յուրացման, գողության, կեղծիքի, կաշառակերության, փաստաթղթերի կեղծման կամ ոչնչացման, կեղծ տվյալների ներկայացման կամ գողացված գույք ձեռք բերելու հետ:

# Պահանջվող փաստաթղթեր

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Պահանջվող փաստաթղթեր

Դուք պետք է հանձնեք ԲՈԼՈՐ պահանջվող փաստաթղթերը, որպեսզի ձեր դիմումը դիտարկվի:

Պահանջվող փաստաթղթերի ցանկը սպառիչ չէ: Կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր՝ վավերացնելու համար դիմումի մեջ ներկայացված տեղեկատվությունը: Բոլոր պահանջվող և/կամ հարցվող փաստաթղթերը չվերբեռնելու դեպքում դիմումը կարող է հետ կանչվել և/կամ մերժվել Ծրագրի կողմից:

1. **Հայտատուի հավաստագրեր**
   - Անհրաժեշտ է ձեր դիմումի մեջ և օժանդակ փաստաթղթերում ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունն ինքնահաստատելու համար:

2. **2023 թվականի տարեկան համախառն եկամտի ապացույց**
   - **Շահույթ հետապնդող բիզնեսներ. Ներկայացված եկամտի դաշնային հարկային հայտարարագիր 2023 թվականի համար** (բոլոր էջերը, ամբողջական և չփոփոխված)
     - Ձև 1120 (տող 11)
     - Ձև 1120S (տող 6)
     - Ձև 1040 Գրաֆիկ C (տող 7)
     - Ձև 1065 (տող 8)
   - **Շահույթ չհետապնդող կազմակերպություններ. 2023 Ձև 990** (բոլոր էջերը, ամբողջական և չփոփոխված)
     - Ձև 990 (տող 12)
     - Ձև 990 E (տող 9)
     - Ձև 990N (տողի համարը կիրառելի չէ)

3. **Բիզնեսի գտնվելու վայրի, գործունեության ժամկետի և պատշաճ կարգավիճակի ապացույց***
   - Գրանցում Կալիֆոռնիայի նահանգային քարտուղարի մոտ կամ կառավարության կողմից տրված, ակտիվ բիզնեսի լիցենզիա/թույլտվություն՝ ըստ անհրաժեշտության:

   ***Միայն շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար.** Կալիֆոռնիայի արդարադատության վարչության բարեգործական կազմակերպությունների և դրամահավաքների գրանցամատյանը կօգտագործվի հաստատելու համար գրանցման ամսաթիվը և գրանցման կարգավիճակը: Հայտատուն պարտավոր չէ ներկայացնել որևէ փաստաթուղթ՝ որպես իր դիմումի մաս:

4. **Կառավարության կողմից տրված լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ (ID)**
   - Վավերացված Persona-ի միջոցով:

5. **Վավեր բանկային հաշիվ**
   - Վավերացված Plaid-ի միջոցով:
   - Բանկային հաշիվը պետք է գրանցված լինի այս դիմումի մեջ նշված օրինական բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության, կամ, եթե կիրառելի է, DBA-ի անվամբ, ***ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ*** անհատ ձեռնարկատերերի, մեկ անդամով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) և անկախ կապալառուների:

     Անհատ ձեռնարկատերերը, մեկ անդամով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (ՍՊԸ) և անկախ կապալառուները կարող են օգտագործել անձնական բանկային հաշիվ, սակայն այն պետք է գրանցված լինի այս դիմումի մեջ նշված Հայտատուի անունով:



# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը

SMALL BUSINESS
DISASTER RECOVERY FUND
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

# Հայտատուի հավաստագրեր

Որպես դիմումի գործընթացի մաս՝ ձեզանից **կպահանջվի** ձեր դիմումի մեջ և օժանդակ փաստաթղթերում հաստատել ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը՝ ստորագրելով **Հայտատուի հավաստագրերը**:

Հայտատուի հավաստագրերը հասանելի կլինեն էլեկտրոնային ձևով, որպեսզի դուք դրանք ներբեռնեք և լրացնեք: **Հայտատուի հավաստագրերի ստորագրած պատճենը պարտադիր փաստաթուղթ է այս Ծրագրի համար և պետք է վերբեռնվի Դիմումների պորտալում որպես PDF ֆայլ**:

Ներբեռնեք Հայտատուի հավաստագրերը և պահպանեք ֆայլը ձեր սարքում: Դուք կարող եք լրացնել Հայտատուի հավաստագրերը էլեկտրոնային եղանակով կամ տպել ֆայլը և ձեռքով լրացնել:

**ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ՝**
**Հայտատուի հավաստագրերը**
**ներբեռնելու համար**

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերն էլեկտրոնային եղանակով

## Քայլ 1

Սեղմեք ներբեռնման ⬇ պատկերակը՝ ներբեռնելու Հայտատուի հավաստագրերը և պահպանելու ֆայլը ձեր սարքում:






## Քայլ 2

Գտեք Հայտատուի հավաստագրերը ձեր սարքում և բացեք ֆայլը: Հայտատուի հավաստագրերը կբացվեն որպես PDF ֆայլ:




## Քայլ 3

Լրացրեք Հայտատուի հավաստագրերը՝ մուտքագրելով ձեր անվան սկզբնատառերը համարակալված նիշերի կողքին և ավելացրեք ձեր ստորագրությունը վերջին էջում:



## Քայլ 4

Հայտատուի հավաստագրերը լրացնելուց հետո **կրկին պահպանեք ֆայլը**՝ անցնելով **Ֆայլ > Պահպանել** կամ ստեղնաշարի վրա սեղմելով **CTRL+S**:

## Քայլ 5

Վերբեռնեք Հայտատուի լրացված հավաստագրերը Դիմումների պորտալում որպես PDF ֆայլ:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Ինչպես ձեռքով լրացնել Հայտատուի հավաստագրերը

## Քայլ 1

Տպեք Հայտատուի հավաստագրերը՝ սեղմելով տպիչի պատկերակը, որն ընդգծված է կարմիր վանդակում ստորև:




## Քայլ 2

Լրացրեք Հայտատուի հավաստագրերը ընթեռնելի ձեռնագրով՝ մուգ գույնի գրիչով:

## Քայլ 3

Սկանավորեք լրացված Հայտատուի հավաստագրերը և պահպանեք ֆայլը ձեր սարքում PDF ձևաչափով:

## Քայլ 4

Վերբեռնեք Հայտատուի լրացված հավաստագրերը Դիմումների պորտալում որպես PDF ֆայլ:

# Դիմումը ներկայացնելու խորհուրդներ

SMALL BUSINESS
DISASTER RECOVERY FUND

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

# Խորհուրդ #1. Օգտագործեք Google Chrome-ը

Լավ աշխատանքի համար օգտվեք Google Chrome-ից դիմումի ներկայացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Այլ վեբ զննիչներ կարող են չաջակցել մեր միջերեսը և սխալներ թույլ տալ ձեր դիմումում:

Եթե դուք չունեք Google Chrome ձեր սարքում, կարող եք այն անվճար ներբեռնել այստեղից՝ https://www.google.com/chrome/:

Նախքան դիմումին անցնելը՝ խնդրում ենք կատարել հետևյալ գործողությունները Google Chrome-ում.

1. **Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը**
2. **Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը**
3. **Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչները**

## Մաքրեք ձեր քեշ հիշողությունը

Քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալներն այն տեղեկություններն են, որոնք պահպանվել են վեբկայքից կամ հավելվածից և հիմնականում օգտագործվում են զննման գործընթացն ավելի արագ դարձնելու համար՝ տեղեկություններն ավտոմատ կերպով լրացնելով: Սակայն, քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալները կարող են ներառել նաև հնացած տեղեկություններ, օրինակ՝ հին գաղտնաբառեր կամ նախկինում սխալ մուտքագրված տեղեկություններ: Սա կարող է սխալների առաջացման պատճառ դառնալ ձեր դիմումում և կարող է հանգեցնել նրան, որ դիմումը հնարավոր խարդախության կասկած հարուցի:

## Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը

Ինկոգնիտո ռեժիմը թույլ է տալիս գաղտնի մուտքագրել ինֆորմացիան և թույլ չի տալիս, որպեսզի ձեր ինֆորմացիան հիշվի կամ պահպանվի քեշ հիշողությունում:

## Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը

Մեր հավելվածը ներառում է բազմաթիվ բացվող հաղորդագրություններ՝ տեղեկատվություն հավաքելու համար: Այս հաղորդագրությունները տեսնելու համար դուք պետք է ապաակտիվացնեք բացվող պատուհանների արգելափակիչը Google Chrome-ում:

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես մաքրել քեշ հիշողությունը

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Մաքրել զննարկման տվյալները**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Մաքրել տվյալները**»:




***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

**The Small Business Disaster Recovery Fund grant program (the "Program") is offered by the Los Angeles Area Chamber of Commerce Foundation through its administrator, B.S.D. Capital, Inc. dba Lendistry (the "Administrator").**

# Ինչպես օգտագործել ինկոգնիտո ռեժիմը

## Քայլ 1

Սեղմեք ձեր վեբ զննիչի վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը, այնուհետև ընտրեք «**Նոր ինկոգնիտո պատուհան**»:




## Քայլ 2

Ձեր զննարկիչը կբացի Google Chrome-ի նոր պատուհան: Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը՝ դիմումի լրացման ամբողջ գործընթացում:




*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ինչպես ապաակտիվացնել բացվող պատուհանների արգելափակիչը

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «**Կարգավորումներ**»:




## Քայլ 2

Անցեք «**Գաղտնիություն և անվտանգություն**», այնուհետև ընտրեք «**Կայքի կարգավորումներ**»:




## Քայլ 3

Ընտրեք «**Բացվող պատուհաններ և վերահղումներ**»: Սեղմեք կոճակը, որպեսզի այն կապույտ դառնա, և կարգավիճակը «**Արգելափակվածից**» դառնա «**Թույլատրված**»:






# Խորհուրդ #2. Պատրաստեք ձեր փաստաթղթերը PDF ձևաչափով

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Պահանջվող բոլոր փաստաթղթերը հարկավոր է վերբեռնել Պորտալում միայն PDF ձևաչափով:

Վերբեռնելիս փաստաթղթերը պետք է լինեն պարզ, ուղիղ դիրքով և չպարունակեն խանգարող հետնապատկերներ։

Կարևոր նշումներ՝ կապված փաստաթղթերի վերբեռնման հետ.

1. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով:
2. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
3. Ֆայլի անվան մեջ ՉԻ ԿԱՐՈՂ լինել որևէ հատուկ նիշ (!@#$%^&*()_+):
4. Եթե ձեր ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, դուք պետք է մուտքագրեք այն։

**Չունե՞ք սկաներ:**
Խորհուրդ ենք տալիս ներբեռնել և օգտվել սկանավորման անվճար բջջային հավելվածից։

**Genius Scan**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

**Adobe Scan**
Apple | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար
Android | Սեղմեք այստեղ ներբեռնելու համար

# Խորհուրդ #3. Օգտագործեք վավեր էլփոստի հասցե

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

**Համոզվեք, որ վավեր էլփոստի հասցե եք նշել, և որ այն ճիշտ է գրված դիմումում:**

- Ձեր դիմումի հետ կապված թարմացումները և լրացուցիչ ուղեցույցները կուղարկվեն ձեր տրամադրած էլփոստի հասցեին:
- Էլփոստի որոշ հասցեներ չեն կարող ճանաչվել Դիմումների պորտալում և կարող են հանգեցնել ձեր դիմումի հետ կապված հաղորդակցության ուշացումների: Անվավեր էլփոստի հասցեների օրինակների համար տես աջ կողմում գտնվող ցանկը:

**Եթե ձեր դիմումում նշել եք սխալ կամ անվավեր էլփոստի հասցե, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի (Customer Experience Center, CEC) հետ՝ 855-476-5870 հեռախոսահամարով՝ ձեր տվյալները թարմացնելու համար:**

**Նոր դիմում ՄԻ՛ ներկայացրեք: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և կարող է խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:**

**Անվավեր էլփոստի հասցեներ**

Հետևյալ էլփոստի հասցեները մեր համակարգում չեն ընդունվի կամ ճանաչվի՝

Էլփոստի հասցեներ, որոնք *սկսվում են* **info@**-ով
Օրինակ՝ info@mycompany.com

Էլփոստի հասցեներ, որոնք *վերջանում են* **@contact.com -ով** կամ **@noreply.com-ով**
Օրինակ՝ mycompany@contact.com
Օրինակ՝ mycompany@noreply.com

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Ի՞նչ է Persona-ն:

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որն օգտագործվում է այս Ծրագրի համար՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը մեզ հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարն ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ՝ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգում կատարելով:

- Հայտատուները պետք է հաստատեն իրենց ինքնությունը Persona-ի միջոցով՝ վերբեռնելով կամ լուսանկարելով կառավարության կողմից տրված լուսանկարով վավեր ID:
- Հայտատուները պետք է նաև սկանավորեն իրենց դեմքը՝ օգտագործելով դիմահայաց դիրքով տեսախցիկով սարք՝ Persona-ով ստուգումն անցնելու համար:

Persona-ի հետ կապված լրացուցիչ օգնության համար այցելեք https://help.withpersona.com/for-end-users/:

## Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներ

1. Օգտագործեք դիմահայաց դիրքով լուսանկարող սարք: Եթե դուք աշխատում եք հավելվածում նոութբուքով կամ համակարգչով, որը չունի տեսախցիկ, ձեզ կառաջարկվի տարբերակ ցանկացած պահի անցնել ստուգումը Persona-ով շարժական սարքով՝ սեղմելով «Շարունակել մեկ այլ սարքով»: Տրամադրված QR կոդը սկանավորելուց հետո կարող եք խնդրել հղում SMS-ի կամ էլնամակի միջոցով:
   - Երբ անցնեք ստուգումը Persona-ով ձեր շարժական սարքով, ավտոմատ կերպով կվերահղվեք ձեր հավելված նոութբուքում կամ համակարգչում:

2. *Նախքան* Persona-ն գործարկելը՝ նախապատրաստվեք և լուսանկարեք կառավարության կողմից տրված ձեր ID-ի երեսակողմն ու դարձերեսը:
   - Դրեք կառավարության կողմից տրված ID-ն հարթ սպիտակ մակերեսին և ապահովեք համապատասխան լուսավորություն:
   - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցոլքեր առաջացնել:

3. Նկարն անելիս բավարար լուսավորություն ապահովեք ձեր դեմքին ուղղված՝ խուսափելով հետևից վառ լույսի աղբյուրներից:
   - Կանգնեք դատարկ պատի կամ դռան առջև և խուսափեք շեղող ֆոնից:
   - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցոլքեր առաջացնել:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին

## Քայլ 1

Սեղմեք «**Սկսել ստուգումը**», այնուհետև ընտրեք կառավարության կողմից տրված ID-ի այն տեսակը, որը ցանկանում եք օգտագործել՝ ձեր ինքնությունը հաստատելու համար:







## Քայլ 2

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **երեսակողմը** : Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տես 18-րդ էջը՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:







*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Քայլ 3

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **դարձերեսը** : Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տես 18-րդ էջը՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:







## Քայլ 4

Եթե օգտագործում եք **դիմահայաց դիրքով** տեսախցիկով սարք, հետևեք էկրանի հուշումներին ինքնանկար անելու համար՝ նայելով առաջ, ձախ և հետո աջ: Տես 18-րդ էջը՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար: Ավարտելուց հետո ընտրեք «Կատարված» և կվերահղվեք դեպի դիմումը:






# Ինչպես բացել դիմում

SMALL BUSINESS
DISASTER RECOVERY FUND

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

# Որտեղ դիմել

Դիմեք այս Ծրագրի համար [www.LAChamberRecoveryFund.com/apply](http://www.LAChamberRecoveryFund.com/apply) հասցեով:

Դիմումը բացելու և ներկայացնելու համար ձեզանից պահանջվում է ստեղծել հաշիվ Դիմումների պորտալի համար: Դուք կարող եք դա անել՝ սեղմելով «**Ստեղծել նոր հաշիվ**»:

Դուք կարող եք մուտք գործել Դիմումների պորտալ 24/7 ռեժիմով՝ սեղմելով «**Մուտք գործել գոյություն ունեցող հաշիվ**»:

Պորտալում դուք կկարողանաք՝
- Լրացնել ձեր դիմումը:
- Վերբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը:
- Ստուգել ձեր դիմումի կարգավիճակը:

**Մինչև վերջնաժամկետը թերի լրացված կամ չներկայացված դիմումները չեն դիտարկվի դրամաշնորհի համար:**
- Անպայման սեղմեք «Ներկայացնել դիմումը դիտարկման համար»՝ ձեր դիմումի ճշգրտությունը ստուգելուց հետո: Դուք կստանաք հաստատման էլնամակ, երբ ձեր դիմումը հաջողությամբ ներկայացվի:



# Ստեղծել հաշիվ Դիմումների պորտալի համար

Գրանցեք այն անհատ սեփականատիրոջ կամ պաշտոնական ներկայացուցչի էլ. հասցեն և բջջային հեռախոսահամարը, որը նշված է որպես լիազորված ստորագրող՝ դրամաշնորհի ստանալու համար դիմող փոքր բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության անունից դիմում ներկայացնելու և փաստաթղթեր կազմելու լիազորությամբ:

Դիմումի մեջ (տե՛ս 27-րդ էջը տեղեկատվության համար): Այստեղ դուք կստանաք ձեր դիմումի վերաբերյալ կարևոր տեղեկատվություն և կարգավիճակի թարմացումներ:

Դիմումների պորտալ մուտք գործելու համար անհրաժեշտ է բազմագործոն նույնականացում: Ամեն անգամ մուտք գործելիս ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի եզակի հաստատման կոդ: Ձեր հաշիվ մուտք գործելու համար ձեզ հարկավոր կլինի այս կոդը:



# Ընտրեք ձեր անվտանգության հարցերը Դիմումների պորտալում



Ձեզ հարկավոր կլինի ընտրել մի շարք անվտանգության հարցեր՝ պաշտպանելու և թույլ տալու համար ապակողպել ձեր հաշիվը՝ մուտք գործելու չափազանց շատ անհաջող փորձերի դեպքում:

Անվտանգության հարցերը նախատեսված են կանխելու համար ձեր պորտալի հաշիվ չթույլատրված մուտքը: Դուք կարող եք ընտրել ցանկացած հարց, որը հասանելի է բացվող ընտրացանկում, սակայն, կարևոր է ընտրել այնպիսի հարցեր և պատասխաններ, որոնք եզակի են ձեզ համար:

- Մի տրամադրեք պատասխանները ցանկացած այլ անձի:
- Գրանցեք ձեր անվտանգության հարցերի պատասխանները: Դրանք մեծատառերի նկատմամբ զգայուն են, և ձեր հաշիվն ապակողպելիս պետք է մուտքագրեք դրանք ճիշտ այնպես, ինչպես գրանցել եք:

Տես 52-56-րդ էջերը՝ հաշվի հետ կապված խնդիրների վերացման կամ ապակողպման հրահանգների համար:



# Դիմումի ներկայացման գործընթացը

SMALL BUSINESS
DISASTER RECOVERY FUND

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Նախաորակավորում

**Նախնական որակավորումը չի երաշխավորում ֆինանսավորում: Դրամաշնորհը ստանալու համար հայտատուները պետք է համապատասխանեն Ծրագրին դիմելու իրավասության բոլոր պահանջներին:**

1. Արդյո՞ք ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը ավերվել կամ վնասվել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհներից, կամ գտնվում է տարհանման տարածքում:[1]
   - Այո
     - Ո՞ր հրդեհից է տուժել ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը:
       - Փալիսեյդս
       - Իթոն
   - Ոչ
     - Արդյո՞ք ձեր հաճախորդների բազայի 50%-ը կամ ավելին գտնվում էր հրդեհի գոտում:[2]
       - Այո
       - Ոչ




[1] Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների աղետի հետևանքների և տարհանման տարածքներ. 90049, 90263, 90265, 90272, 90290, 91001, 91023, 91024, 91011, 91104, 91107
[2] Հաճախորդների խումբը, որոնց ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը մատակարարում է ապրանքներ կամ ծառայություններ

# Բաժին 2. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի տվյալներ



## Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի տվյալներ

**Այս բաժնում որպես լիազորված ստորագրող նշված սեփականատիրոջ կամ պաշտոնական ներկայացուցչի հետ Lendistry-ն կկապվի էլ. փոստով և հեռախոսով՝ դիմումի վերաբերյալ թարմացումներ տրամադրելու և/կամ լրացուցիչ տեղեկատվություն խնդրելու համար: Տվյալ անձի կողմից չարձագանքելը կարող է հանգեցնել դիմումի հետկանչի և/կամ Ծրագրի կողմից մերժման:**

1. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի անուն
2. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ազգանուն
3. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի էլփոստի հասցե
4. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության հասցեի 1-ին և 2-րդ տողեր (Սա պետք է լինի ֆիզիկական հասցե: Փոստային արկղերը և վիրտուալ հասցեները չեն ընդունվի այս դիմումի համար):
5. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության քաղաք
6. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության նահանգ
7. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության փոստային ինդեքս
8. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի փոստային հասցեն տարբերվու՞մ է բնակության հասցեից:
   - Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի փոստային հասցեի 1-ին և 2-րդ տողեր

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



# Բաժին 2. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի տվյալներ

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի տվյալներ

**Այս բաժնում որպես լիազորված ստորագրող նշված սեփականատիրոջ կամ պաշտոնական ներկայացուցչի հետ Lendistry-ն կկապվի էլ. փոստով և հեռախոսով՝ դիմումի վերաբերյալ թարմացումներ տրամադրելու և/կամ լրացուցիչ տեղեկատվություն խնդրելու համար: Տվյալ անձի կողմից չարձագանքելը կարող է հանգեցնել դիմումի հետկանչի և/կամ Ծրագրի կողմից մերժման:**

9. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի հեռախոսահամար

10. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի անունը (կամավոր)

11. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ծննդյան ամսաթիվ

12. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի սոցիալական ապահովագրության համար (Social Security Number, SSN) կամ հարկ վճարողի անհատական նույնականացման համար (Individual Taxpayer Identification Number, ITIN)[1]

13. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի լեզուն բանավոր հաղորդակցության համար[2]

14. Սեփականության տոկոսը (%) (0% բոլոր շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար)

15. Ես ընդունում եմ SMS/տեքստային հաղորդագրության հետ կապված քաղաքականությունը[3]

[1] Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է՝ հաստատելու համար, որ Յայտատուն իրավասու է դաշնային միջոցներ ստանալու համար:
[2] Լեզվական օգնությունը հասանելի է հայերենով, չինարենով (պարզեցված), չինարենով (ավանդական), անգլերենով, իսպաներենով և տագալոգով՝ մեր Յաճախորդների սպասարկման կենտրոնի միջոցով: Գրավոր հաղորդագրությունները, օրինակ՝ էլ. փոստը, հասանելի է միայն անգլերենով:
[3] Ձեր դրամաշնորհային դիմումի կարգավիճակի թարմացումները կարող են տրամադրվել SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ. SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ թարմացումներ ստանալու համար խնդրում ենք տրամադրել համաձայնություն կից տեղեկատվության բացահայտումը կարդալուց հետո



LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Բիզնեսի/շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությունը կվավերացվի՝ օգտագործելով, առանց սահմանափակման, դիմումի հետ վերբեռնված պահանջվող փաստաթղթերը: Մենք կկապվենք նախորդ բաժնում որպես լիազորված ստորագրող նշված սեփականատիրոջ կամ պաշտոնական ներկայացուցչի հետ, եթե անհրաժեշտ լինի լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Տվյալ անձի կողմից չարձագանքելը կարող է հանգեցնել դիմումի հետկանչի և/կամ Ծրագրի կողմից մերժման:**

1. Բիզնեսի/շահույթ չհետապնդող կազմակերպության իրավական անվանում
2. Բիզնեսը գործում է որպես (Doing Business As, DBA). Մուտքագրեք «Կիրառելի չէ», եթե կիրառելի չէ
3. Տուժած բիզնեսի հասցեի 1-ին և 2-րդ տողեր (Սա պետք է լինի ֆիզիկական հասցե: Փոստային արկղերը և վիրտուալ հասցեները չեն ընդունվի այս դիմումի համար):[1]
4. Բիզնեսի փոստային հասցեն տարբերվո՞ւմ է տուժած բիզնեսի հասցեից:[1]
   - Ոչ
   - Այո
     - Բիզնեսի փոստային հասցեի 1-ին և 2-րդ տողեր
5. Բիզնեսի հեռախոսահամարը
6. Արդյո՞ք դուք ներկայացնում եք շահույթ հետապնդող կամ չհետապնդող կազմակերպություն:
   - Շահույթ հետապնդող բիզնես
   - Շահույթ չհետապնդող կազմակերպություն

[1]Տուժած բիզնեսի հասցեն այն վայրն է, որն ուղղակիորեն տուժել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների հետևանքով:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



## Բիզնեսի/շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությունը կվավերացվի՝ օգտագործելով, առանց սահմանափակման, դիմումի հետ վերբեռնված պահանջվող փաստաթղթերը: Մենք կկապվենք նախորդ բաժնում որպես լիազորված ստորագրող նշված սեփականատիրոջ կամ պաշտոնական ներկայացուցչի հետ, եթե անհրաժեշտ լինի լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Տվյալ անձի կողմից չարձագանքելը կարող է հանգեցնել դիմումի հետկանչի և/կամ Ծրագրի կողմից մերժման:**

7. Բիզնես սուբյեկտի տեսակը[1]
   - Եթե հայտատուն ընտրում է շահույթ հետապնդող բիզնես.
     - Անհատ ձեռնարկատեր
     - Անկախ կապալառու
     - ՍՊԸ
     - C-Corp
     - S-Corp
     - Գործընկերություն
     - Սահմանափակ պատասխանատվությամբ գործընկերություն
   - Եթե հայտատուն ընտրում է շահույթ չհետապնդող կազմակերպություն
     - 501(c)(3)
     - Այլ

8. Բիզնեսի կազմակերպչական ձևը

9. Բիզնեսի գրանցման ամսաթիվ[2]

[1]Շահույթ չհետապնդող կազմակերպությունները պետք է լավ համբավ ունենան Կալիֆոռնիայի արդարադատության վարչության բարեգործական կազմակերպությունների և դրամահավաքների գրանցամատյանում այս Ծրագրի համար դիմելու համար
[2]Օգտագործեք այն ամսաթիվը, երբ ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունն առաջին անգամ գրանցվել է Կալիֆոռնիայի նահանգային քարտուղարի մոտ կամ լիցենզիա է ստացել բիզնես ծավալելու Կալիֆոռնիայի համապատասխան քաղաքում, վարչաշրջանում կամ նահանգային մարմնում

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Բիզնեսի/շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությունը կվավերացվի՝ օգտագործելով, առանց սահմանափակման, դիմումի հետ վերբեռնված պահանջվող փաստաթղթերը: Մենք կկապվենք նախորդ բաժնում որպես լիազորված ստորագրող նշված սեփականատիրոջ կամ պաշտոնական ներկայացուցչի հետ, եթե անհրաժեշտ լինի լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Տվյալ անձի կողմից չարձագանքելը կարող է հանգեցնել դիմումի հետկանչի և/կամ Ծրագրի կողմից մերժման:**

10. Բիզնեսի/շահույթ չհետապնդող կազմակերպության վեբկայքի URL: Մուտքագրեք «Կիրառելի չէ, եթե ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը չունի վեբկայք:

11. Ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունն ունի՞ գործատուի նույնականացման համար (Employer Identification Number, EIN):
    - Այո
        - Գործատուի նույնականացման համարը (EIN)[1]
    - Ոչ
        - Հարկային նույնականացման համարը (SSN/ITIN)[2]

12. 2023 օրացուցային տարվա տարեկան համախառն եկամուտ, ինչպես հաղորդվել է IRS[3]-ին
    - Հայտատուն կարող է մուտքագրել ցանկացած գումար




[1]Գործատուի նույնականացման համարով (Employer Identification Number, EIN) հաստատվում է, որ հայտատուն իրավասու է ստանալ դաշնային միջոցներ
[2] Այս տեղեկատվությունն անհրաժեշտ է՝ հաստատելու համար, որ Հայտատուն իրավասու է դաշնային միջոցներ ստանալու համար
[3] Եկամտի հարկային հայտարարագրեր շահույթ հետապնդող բիզնեսների համար կամ Ձև 990 շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար:

# Բաժին 4. Բիզնեսի/շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ 2

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ 2

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությունը չի ազդի կամ որոշի իրավասությունը: Մենք հավաքում ենք այս տեղեկատվությունը փոքր բիզնեսների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների վերաբերյալ միայն հաշվետվության նպատակների համար:**

1. Արդյոք դուք ներկայումս Լոս Անջելեսի տարածքային առևտրի պալատի անդամ եք
    - Այո
    - Ոչ

2. Պահանջվող դրամաշնորհի գումար (դրամաշնորհի գումարները որոշվում են 2023 թվականի տարեկան համախառն եկամուտներով: Ձեր հայցած դրամաշնորհի գումարը չի երաշխավորվում:)
    - $10 000
    - $15 000
    - $25 000



LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ 2

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությունը չի ազդի կամ որոշի իրավասությունը: Մենք հավաքում ենք այս տեղեկատվությունը փոքր բիզնեսների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների վերաբերյալ միայն հաշվետվության նպատակների համար:**

3. Ինչպե՞ս եք տեղեկացել այս ծրագրի մասին:
    - Ծրագրի վեբկայք
    - Lendistry-ի վեբկայք
    - Լոս Անջելեսի տարածքային առևտրի պալատի վեբկայք
    - Սոցիալական ցանցեր (Facebook, Instagram, LinkedIn, X, TikTok, Youtube և այլն)
    - Նորություններ՝ հեռուստացույց, թերթ, առցանց
    - Բերանից բերան (ընտանիք, ընկեր և այլն)
    - Աշխատավայր
    - Դպրոց
    - Ռադիո կամ փոդքաստ
    - Պետական ռեսուրսի վեբկայք
    - Անձնական ներկայության միջոցառում
    - Էլփոստ
    - Հեռուստացույց/գովազդ
    - Որոնիչ (Google, Bing և այլն)
    - Այլ
    - Կիրառելի չէ

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության տվյալներ 2

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությունը չի ազդի կամ որոշի իրավասությունը: Մենք հավաքում ենք այս տեղեկատվությունը փոքր բիզնեսների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների վերաբերյալ միայն հաշվետվության նպատակների համար:**

4. Արդյո՞ք օգնություն եք ստացել Ծրագրի գործընկերոջից:
    - Ես չեմ օգտվել գործընկերոջից
    - Լոս Անջելեսի ասիական բիզնես ասոցիացիա (Asian Business Association of LA, ABALA)
    - Կալիֆոռնիայի սևամորթների առևտրի պալատ
    - Կալիֆոռնիայի միկրոձեռնարկատիրական հնարավորությունների ասոցիացիա (California Association for Micro Enterprise Opportunity, CAMEO_
    - Կալիֆոռնիայի իսպանախոսների առևտրի պալատ
    - LA SBDC
    - Lendistry-ի կենտրոն
    - Վերմոնտ Սլոուսոն EDC
    - Այլ

5. Ովքե՞ր են ձեր հիմնական հաճախորդները:
    - Բիզնեսից բիզնես
    - Բիզնեսից հաճախորդ
    - Երկուսն էլ
    - Վստահ չեմ



LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Լրացուցիչ տեղեկատվություն

### Իրավասությունը որոշելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն

1. Արդյո՞ք ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը գրանցվել էր Կալիֆոռնիա նահանգում օրինական բիզնես անելու համար՝ 2023 թվականի հունիսի 1-ին կամ դրանից առաջ:
   - Այո
   - Ոչ
2. Արդյո՞ք ձեր բիզնեսը ներկայումս բաց է և գործում է:
   - Այո
   - Ոչ
3. Արդյո՞ք ձեր բիզնեսը նախատեսում է վերաբացվել տուժած հասցեում:[1]
   - Այո
   - Ոչ
4. Եթե բիզնեսը չվերաբացվի տուժած հասցեում, արդյո՞ք ձեր բիզնեսը նախատեսում է վերաբացվել ազդեցության ենթարկված տարածքում:
   - Այո, Փալիսեյդս
   - Այո, Իթոն
   - Ոչ, բիզնեսը չի նախատեսվում վերաբացել
   - Ոչ, բիզնեսը պլանավորում է տեղափոխվել Փալիսեյդսի կամ Իթոնի հրդեհային տարածքից դուրս գտնվող նոր տարածք




[1] Տուժած բիզնեսի հասցեն այն վայրն է, որն ուղղակիորեն տուժել է 2025 թվականի Լոս Անջելես վարչաշրջանի Իթոնի և Փալիսեյդսի անտառային հրդեհների հետևանքով:

# Բաժին 6. Ժողովրդագրական տվյալներ

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Ժողովրդագրական տվյալներ

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությամբ չի որոշվի իրավասությունը: Մենք հավաքում ենք այս տվյալները միայն վերլուծական նպատակներով:**

1. Բիզնեսը վետերանի՞ է պատկանում:
   - Այո
   - Ոչ
   - Հրաժարվել պատասխանելուց

2. Բիզնեսի սեփականատերը կի՞ն է:
   - Այո
   - Ոչ
   - Հրաժարվել պատասխանելուց

3. Բիզնեսը հաշմանդամություն ունեցող անձի՞ է պատկանում:
   - Այո
   - Ոչ
   - Հրաժարվել պատասխանելուց

4. Բիզնեսը LGBTQIA+ ներկայացուցչի՞ է պատկանում:
   - Այո
   - Ոչ
   - Հրաժարվել պատասխանելուց

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*



LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Ժողովրդագրական տվյալներ

**Այս բաժնում տրամադրված տեղեկատվությամբ չի որոշվի իրավասությունը: Մենք հավաքում ենք այս տվյալները միայն վերլուծական նպատակներով:**

5. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ռասայական պատկանելությունը
    - Ամերիկացի հնդկացի կամ Ալյասկայի բնիկ
    - Ասիացի
    - Սև կամ աֆրոամերիկացի
    - Հավայան կամ Խաղաղօվկիանոսյան այլ կղզիների բնիկ
    - Սպիտակ
    - Այլ
    - Բազմառասայական
    - Հրաժարվել պատասխանելուց

6. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի էթնիկ պատկանելությունը
    - Իսպանախոս կամ լատինոամերիկյան
    - Ոչ իսպանախոս կամ լատինոամերիկյան
    - Հրաժարվել պատասխանելուց

7. NAICS կոդ[1]
    - Որոնեք ձեր NAICS կոդը

[1]NAICS կոդերի համակարգն օգտագործվում է դաշնային վիճակագրական գործակալությունների կողմից՝ ԱՄՆ տնտեսության հետ կապված վիճակագրական տվյալներ հավաքելու, վերլուծելու և հրապարակելու համար: NAICS-ն ինքնանշանակվող համակարգ է. ոչ ոք ձեզ NAICS կոդ չի նշանակում: Սա նշանակում է, որ ընկերությունն ընտրում է այն կոդը, որը լավագույնս արտացոլում է իր հիմնական բիզնես գործունեությունը, ապա օգտագործում է այն՝ կոդը հայցելիս: Ձեր պատմական NAICS-ը նշված է ձեր բիզնեսի հարկային հայտարարագրում:



LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Ինքնության վավերացում Persona-ի միջոցով

**Այս բաժնում դուք պետք է հաստատեք ձեր ինքնությունը՝ օգտագործելով Persona հարթակը՝ վերբեռնելով կամ լուսանկարելով կառավարության կողմից տրված վավեր ID-ն:**

Կառավարության կողմից տրված ID-ի ընդունելի ձևերի մեջ մտնում են՝

- Վարորդական վկայական
- Նահանգային ID կամ այլ պետության կառավարության կողմից տրված նույնականացման քարտ
- ԱՄՆ անձնագիր կամ օտարերկրյա անձնագիր
- Ցեղային ID

Դուք նաև պետք է սկանավորեք ձեր դեմքը դիմահայաց դիրքով տեսախցիկով սարքում: Վերանայեք 18-20-րդ սլայդերը՝ Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու լավագույն փորձի համար:

**Ի՞նչ է Persona-ն:**

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարն ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ՝ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգում կատարելով:



# Բաժին 8. Վերբեռնել փաստաթղթերը

## Դիմելու համար պահանջվող փաստաթղթեր

Պահանջվող փաստաթղթերի ցանկը սպառիչ չէ: Կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր՝ վավերացնելու համար դիմումի մեջ ներկայացված տեղեկատվությունը: Բոլոր պահանջվող և/կամ հարցվող փաստաթղթերը չվերբեռնելու դեպքում դիմումը կարող է հետ կանչվել և/կամ մերժվել Ծրագրի կողմից:

**Սեղմեք այստեղ՝ դիտելու համար Պահանջվող փաստաթղթեր**

*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*



# Բաժին 7. Վերբեռնել փաստաթղթերը

## Դիմելու համար պահանջվող փաստաթղթեր

Պահանջվող փաստաթղթերի ցանկը սպառիչ չէ: Կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր՝ վավերացնելու համար դիմումի մեջ ներկայացված տեղեկատվությունը: Բոլոր պահանջվող և/կամ հարցվող փաստաթղթերը չվերբեռնելու դեպքում դիմումը կարող է հետ կանչվել և/կամ մերժվել Ծրագրի կողմից:

**Քայլ 1**

Ընտրեք վերբեռնման պատկերակը՝ ձեր սարքում փաստաթղթի ֆայլը տեղադրելու համար, կամ ֆայլը քաշեք-գցեք պատկերակի մեջ:

**Քայլ 2**

Եթե ձեր ֆայլը դիտելու համար պահանջվում է գաղտնաբառ, սեղմեք երեք կետերին՝ ⋮ և ընտրեք **«Սահմանել գաղտնաբառ»**՝ գաղտնաբառը մուտքագրելու համար: Դուք նաև կարող եք սեղմել երեք կետերին՝ ֆայլը դիտելու, փոխելու կամ ջնջելու համար:

**Քայլ 3**

Երբ ձեր ֆայլը վերբեռնվի, դրա կարգավիճակը կփոխվի **ՊԱՀԱՆՋՎՈՂ**-ից **ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ** կարգավիճակի:

**Քայլ 4**

Կրկնեք վերոնշյալ քայլերը՝ մինչև որ բոլոր պահանջվող փաստաթղթերը վերբեռնվեն:



# Բաժին 8. Բանկային տվյալներ՝ Plaid



## Բանկային տվյալներ

**Plaid-ն արագ և անխափան միջոց է տրամադրելու այն, ինչ մեզ անհրաժեշտ է ձեր բանկային տվյալները ստուգելու համար: Այն ազատում է փաստաթղթերը սկանավորելու և վերբեռնելու անհրաժեշտությունից՝ հեշտացնելով ձեր խնդիրը և մեզ թույլ է տալիս ավելի արագ որոշումը տրամադրել:**

**Ինչու՞ են հարկավոր ձեր բանկային տվյալները:**
Lendistry-ն օգտագործում է Plaid, երրորդ կողմի տեխնոլոգիական ծառայություն տրամադրող՝ ձեր բանկային հաշիվը հաստատելու և ACH վճարային համակարգով փոխանցումներ կատարելու համար՝ կապակցելով ԱՄՆ-ի ցանկացած բանկի կամ վարկային միության հաշիվները Դիմումների պորտալի նման հավելվածին: **Plaid-ն օգտագործում է գաղտնագրում և այլ անվտանգության միջոցներ՝ պաշտպանելու համար ձեր տվյալները, չի կիսվում ձեր անձնական տվյալներով առանց ձեր թույլտվության և չի վաճառում կամ վարձակալության տալիս դրանք չարտոնված երրորդ անձանց՝ առանց ձեր համաձայնության:**

Բանկային տվյալների ստուգման այս եղանակը նախընտրելի է, բայց միշտ չէ, որ աշխատում է, եթե ձեր բանկային հաստատությունը հասանելի չէ մատակարարի միջոցով: Եթե հայտատուն չունի առցանց բանկինգի կարգավորում կամ նրա բանկային հաշիվը չի կարող ստուգվել Plaid-ով, ապա դուք կարող եք ձեռքով մուտքագրել ձեր հաշվի տվյալները: Տես 45-րդ էջը:

**Կարևոր նշում. Բանկային հաշիվը պետք է գրանցված լինի այս դիմումի մեջ նշված օրինական բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության անվամբ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ անհատ ձեռնարկատերերի, մեկ անդամով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) և անկախ կապալառուների:**

**Անհատ ձեռնարկատերերը, մեկ անդամով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (ՍՊԸ) և անկախ կապալառուները կարող են օգտագործել անձնական բանկային հաշիվ, սակայն այն պետք է գրանցված լինի այս դիմումի մեջ նշված Հայտատուի անունով:**

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



# Բաժին 8. Բանկային տվյալներ՝ Plaid

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

1




Անցեք Plaid:

2




Եթե ունեք գոյություն ունեցող Plaid հաշիվ, մուտքագրեք այն համարը, որը գրանցել եք դրանում: Եթե չունեք հաշիվ, շարունակեք որպես հյուր:

3




Ընտրեք ձեր բանկային հաստատությունը:

4




Շարունակեք մուտք գործել ձեր հաշիվ:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Բաժին 8. Բանկային տվյալներ՝ Plaid

5




Մուտք գործեք ձեր բանկային հաստատություն:

6




Հաստատեք ձեր ինքնությունը:

7




Ընտրեք այն հաշիվը, որը ցանկանում եք ստանալ դրամաշնորհային միջոցներ ACH-ի միջոցով

8




Կարդացեք Plaid-ի պայմաններն ու դրույթները, այնուհետև միացրեք ձեր հաշվի տվյալները Դիմումների պորտալին

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Բաժին 8. Բանկային տվյալներ՝ Plaid

**9**




Վերանայեք և հաստատեք տվյալների այն տեսակը, որը տրամադրում եք:

**10**




Մուտքագրեք ձեր բջջային համարը, եթե ցանկանում եք պահպանել ձեր հաշիվը Plaid-ում: Հակառակ դեպքում ավարտեք առանց պահպանելու:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

## Այլընտրանքային եղանակ բանկային տվյալների մուտքագրման համար

Եթե հայտատուն չունի առցանց բանկինգի կարգավորում կամ նրա բանկային հաշիվը չի կարող ստուգվել Plaid-ով, ապա դուք կարող եք ձեռքով մուտքագրել ձեր հաշվի տվյալները: Դա անելու համար դուք պետք է վերբեռնեք ձեր երկու վերջին բանկային քաղվածքը Դիմումների պորտալում՝ հաշվի վերաբերյալ ֆինանսական տեղեկատվության հետ միասին:

Դուք կարող եք գտնել ձեր հաշվեհամարը և երթուղային համարը չեկի ստորին հատվածում: Երթուղային համարը թվերի առաջին կազմն է, իսկ հաշվեհամարը թվերի երկրորդ կազմն է:

Եթե դուք չունեք ֆիզիկական չեկ, ֆինանսական հաստատությունների մեծ մասը տրամադրում է հաշիվը և երթուղային համարները հաշվի տվյալների տակ: Կապվեք ձեր ֆինանսական հաստատության հետ՝ օգնելու գտնել այս համարները:



## Դիմումի դիտարկում

Խնդրում ենք վերանայել ձեր դիմումը՝ նախքան ներկայացնելը՝ համոզվելու համար, որ բոլոր պատասխանները ճշգրիտ են: **Ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք այլևս <u>ՉԵՔ</u> կարողանա այն խմբագրել:**

1. Խմբագրելու համար ձեր պատասխանները, սեղմեք «**Ես որոշ բաներ պետք է խմբագրեմ**»:

2. Նշեք վանդակը՝ հաստատելու և թույլատրելու համար հետևյալը.
   - Նշելով այս վանդակը՝ դուք համաձայնում եք այս պայմաններին և դրույթներին:

3. Եթե ձեզ հարկավոր է ավելի շատ ժամանակ՝ ձեր դիմումը վերանայելու կամ լրացնելու համար, սեղմեք «**Պահպանել և շարունակել ավելի ուշ**» կոճակը:

4. Եթե ձեր դիմումը պատրաստ է ներկայացման համար, սեղմեք «**Ներկայացնել դիմումը դիտարկման համար**»:




Դուք պետք է ներկայացնեք ձեր դիմումը մինչև վերջնաժամկետը: Մինչև վերջնաժամկետը թերի լրացված կ[illegible] **<u>չեն</u>** դիտարկվի դրամաշնորհի համար:

# Դիմումի ներկայացում

Դուք կստանաք հաստատման էլ. նամակ noreply@lendistry.com հասցեից՝ հաստատելու համար, որ ձեր դիմումը հաջողությամբ ներկայացվել է:

Եթե ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք հաստատման էլնամակ չեք ստանում.

- Ստուգեք ձեր սպամի պանակը՝ noreply@lendistry.com հասցեից էլնամակ գտնելու համար, և այդ էլփոստի հասցեն ավելացրեք ձեր էլփոստի հաշվի անվտանգ ուղարկողների ցանկում:
- Մուտք գործեք Դիմումների պորտալ և անպայման սեղմեք «Ներկայացնել դիմումը դիտարկման համար» (տես 46-րդ էջը տեղեկատվության համար):

Lendistry-ն կարող է կապվել ձեզ հետ էլփոստի կամ հեռախոսի միջոցով, եթե հարկավոր են լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր՝ ձեր դիմումը դիտարկելու համար:

**Դուք պետք է պատասխանեք բոլոր հարցումներին, որպեսզի ձեր դիմումը մնա դիտարկման գործընթացում:**


Lendistry <noreply@lendistry.com>
Wednesday, December 21, 2022 11:53:56 AM
Show pictures

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION
SMALL BUSINESS DISASTER RECOVERY FUND
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Hi Richard,

Welcome to the Lendistry Application Portal for the Small Business Disaster Recovery Fund, offered by the Los Angeles Area Chamber of Commerce Foundation.

In the Portal, you will be able to:

- Complete your application.
- Upload required documents.
- Check the status of your application.

Sign in to Application Portal

You can access Application Portal at:
http://lachamberrecoveryfund.mylendistry.com/

Before you start, please read the information below closely:

- To be reviewed, you must submit your application by **5:00pm PT on June 6, 2025* (subject to change)**. Incomplete applications will not be considered. *Please make sure you click "Submit." You will receive a confirmation email once your application has been successfully submitted.*
- **Funding for the Small Business Disaster Recovery Fund is limited.** The number of applicants that meet the eligibility requirements may exceed the available funds. Submitting an application, meeting the eligibility requirements, and/or being approved does not guarantee that you will receive funding.

The Lendistry Customer Experience Center is here to help you through the application process and answer any questions:

(855) 476-5870
Monday - Friday,
7:00 a.m. - 7:00 p.m. PT

Thank you,
Lendistry on Behalf of the Small Business Disaster Recovery Fund



# Դիտարկման գործընթացը

SMALL BUSINESS
DISASTER RECOVERY FUND

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

# Դիտարկման գործընթաց

## Ինչպե՞ս կիմանամ, որ ինձ դրամաշնորհ են տրամադրել:

Այս Ծրագրի համար դիմելու գործընթացն ունի վավերացման մի քանի փուլ: Դրամաշնորհը ստանալու համար առաջին հերթին ձեր փոքր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը պետք է նախ համապատասխանի ծրագրին դիմելու իրավասության նվազագույն պահանջներին:

Աղետներից հետո փոքր բիզնեսի վերականգնման հիմնադրամը կարող է փորձել կապվել ձեզ հետ մի քանի անգամ էլփոստի և/կամ հեռախոսի միջոցով, եթե անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր՝ դիմումը վավերացնելու համար: Դիմումը կարող է մերժվել, եթե նման հարցումները չկատարվեն:

**Երբ ձեր փոքր բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության վերաբերյալ որոշում ընդունվի, որ այն իրավասու է այս Ծրագրին մասնակցելու համար, դիմումը կանցնի վերջնական վավերացման փուլ, որի ընթացքում վավերացվում է ձեր տրամադրած տեղեկատվության և փաստաթղթերի ճշգրտությունն ու ճշմարտացիությունը:**

**Կարևոր նշում.** Աղետներից հետո փոքր բիզնեսի վերականգնման հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորումը սահմանափակ է: Հնարավոր է, որ իրավասության պահանջները բավարարող հայտատուների թիվը գերազանցի հասանելի միջոցները: **Դիմում ներկայացնելը, իրավունակության պահանջները բավարարելը և/կամ հաստատման ստացումը չի երաշխավորում, որ դուք կստանաք ֆինանսավորում:**

Ձեր դիմումն ամբողջովին վավերացնելուց հետո դուք էլ. նամակ կստանաք Lendistry-ից, որով ձեզ կտեղեկացվի, որ ձեր ֆինանսավորումը հաստատվել կամ մերժվել է:

## Ինչպե՞ս կարող եմ ստուգել իմ դիմումի կարգավիճակը:

Դուք ցանկացած պահի կարող եք ստուգել ձեր դիմումի կարգավիճակը՝ մուտք գործելով Դիմումների պորտալ՝ օգտագործելով ձեր գրանցած օգտանունը, գաղտնաբառը և բջջային համարը: Մուտք գործելուց հետո կարգավիճակը կհայտնվի կառավարման վահանակին:

**Մուտք գործեք Դիմումների պորտալ այստեղ՝**
https://LAChamberRecoveryFund.mylendistry.com/auth/sign-in

## Իմ փաստաթղթերը և բանկային տվյալներն ամբողջովին վավերացվել են, և ինձ հաստատել են ֆինանսավորման համար: Ե՞րբ ես կստանամ ֆինանսավորում:

Երբ ձեր դիմումն ամբողջովին վավերացվի և հաստատվի դրամաշնորհային ֆինանսավորման համար, ձեր դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9 ձևը հասանելի կդառնան ձեզ՝ **DocuSign-ի փաստաթղթի** տեսքով Դիմումների պորտալում: Մուտք գործեք և հետևեք DocuSign-ի ցուցումներին՝ երկու փաստաթղթերում ձեր անվան սկզբնատառերը, ստորագրությունը և ամսաթիվը դնելու համար:

**Մուտք գործեք Դիմումների պորտալ այստեղ՝**
https://LAChamberRecoveryFund.mylendistry.com/auth/sign-in

**Կարևոր նշում. Ձեր միջոցները ձեզ չեն տրամադրվի այնքան ժամանակ, քանի դեռ չի ստորագրվել դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9-ը: Դրամաշնորհառուները, ովքեր չեն ստորագրել այս երկու փաստաթղթերը, կարող են զրկվել իրենց դրամաշնորհից, համաձայնագիրը կարող է չեղարկվել, և/կամ դիմումը Ծրագրի կողմից կարող է մերժվել:**

# Դիմումի կարգավիճակ

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

| Կարգավիճակ | Ի՞նչ է դա նշանակում | Հայտատուից պահանջվող գործողություն |
|---|---|---|
| *Թերի է լրացված* | Ձեր դիմումը թերի է լրացված կամ չի ներկայացվել: | Ներկայացրեք ձեր դիմումը մինչև վերջնաժամկետը: Թերի լրացված կամ չներկայացված դիմումները չեն ուսումնասիրվի և չեն դիտարկվի դրամաշնորհի համար: Դուք կստանաք հաստատման էլ. նամակ, եթե ձեր դիմումը ներկայացվել է: |
| *Դիմումը ներկայացվել է* | Դուք հաջողությամբ ներկայացրել եք ձեր դիմումը: Ստուգեք ձեր էլփոստը՝ հաստատման համար: Եթե չեք ստանում այս էլնամակը, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Lendistry-ն կկապվի Հայտատուի հետ, երբ որոշվի՝ արդյոք նա իրավասու է դրամաշնորհ ստանալու համար, թե՝ ոչ: |
| *Դիմումը ներկայացվել է, սակայն պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր:* | Դուք դիմում եք ներկայացրել, սակայն ձեր տրամադրած տեղեկատվությունը վավերացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: | Մուտք գործեք Դիմումների պորտալ և վերբեռնեք պահանջված տեղեկատվությունը և/կամ փաստաթղթերը: Ձեր դիմումին չի կարող ընթացք տրվել, քանի դեռ այն չի լրացվել: |
| *Դիմումը վերանայվում է՝ ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար:* | Ձեր դիմումին և փաստաթղթերի վերանայմանը ընթացք է տրվել: Ձեր դիմումն այժմ վերանայվում է՝ ծրագրի պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Lendistry-ն կկապվի Հայտատուի հետ, երբ որոշվի՝ արդյոք նա իրավասու է դրամաշնորհ ստանալու համար, թե՝ ոչ: |
| *Ձեր դիմումը ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ, քանի որ չի համապատասխանում ծրագրի նվազագույն պահանջներին:* | Ձեր դիմումը չի համապատասխանում Ծրագրի նվազագույն պահանջներին և չի դիտարկվի դրամաշնորհի տրամադրման համար: | Հայտատուները էլփոստով ծանուցում կստանան, եթե չհամապատասխանեն այս դրամաշնորհային Ծրագրից օգտվելու պահանջներին: Եթե դիմումի մեջ Հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության և/կամ փաստաթղթերի մեջ սխալ է եղել, կապվեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ այս էլ. նամակը ստանալուց հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում: Խնդրում ենք հաշվի առնել, որ սա չի երաշխավորի իրավասությունը: Դիմումի հետագա վավերացման համար կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Եթե այս ժամանակաշրջանի ընթացքում մենք չստանանք նամակ հայտատուից, նրա դիմումը կմնա ոչ իրավասու, իսկ գործը կփակվի: |
| *Ձեր դիմումը բավարարում է Ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջները և կանցնի վավերացման հաջորդ փուլ:* | Ձեր դիմումը բավարարում է ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջները և կանցնի վավերացում՝ որոշելու համար՝ ձեզ հաստատո՞ւմ, թե՞ մերժում են դրամաշնորհ տրամադրել: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Lendistry-ն կկապվի Հայտատուի հետ միայն այն դեպքում, երբ նրա դիմումը վավերացնելու համար պահանջվի լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: |

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***

# Դիմումի կարգավիճակ

| Կարգավիճակ | Ի՞նչ է դա նշանակում | Հայտատուից պահանջվող գործողություն |
| --- | --- | --- |
| *Պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր, որպեսզի ձեր դիմումն անցնի վավերացման փուլ:* | Ձեր դիմումն ամբողջությամբ վավերացնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ: | Վերբեռնեք բոլոր պահանջվող տեղեկությունները և/կամ փաստաթղթերը Դիմումների պորտալում: Դիմումները չեն վավերացվի՝ մինչև որ բոլոր պահանջները չկատարվեն: |
| *Դիմումը մերժվել է* | Դրամաշնորհի տրամադրման ձեր դիմումը մերժվել է: | Հայտատուները էլփոստով ծանուցում կստանան, եթե չհամապատասխանեն այս դրամաշնորհային Ծրագրից օգտվելու պահանջներին: Եթե դիմումի մեջ հայտատուի կողմից ներկայացված տեղեկատվության և/կամ փաստաթղթերի մեջ սխալ է եղել, կապվեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ այս էլ. նամակը ստանալուց հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում: Խնդրում ենք հաշվի առնել, որ սա չի երաշխավորի իրավասությունը: Դիմումի հետագա վավերացման համար կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն և/կամ փաստաթղթեր: Եթե այս ժամանակաշրջանի ընթացքում մենք չստանանք նամակ հայտատուից, նրա դիմումը կմնա մերժված, իսկ գործը կփակվի: |
| *Դիմումը հաստատվել է* | Դրամաշնորհի տրամադրման ձեր դիմումը հաստատվել է: | Եթե հայտատուն հաստատվի ֆինանսավորման համար, նրա դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9-ը հասանելի կլինեն որպես DocuSign փաստաթուղթ Դիմումների պորտալում: Հաստատված հայտատուները պետք է հետևեն DocuSign-ի հրահանգներին՝ երկու փաստաթղթերում անվան սկզբնատառերը, ստորագրությունը և ամսաթիվը դնելու համար: |
| *Դիմումը հաստատվել է, դրամաշնորհի ստացման փաստաթղթերն ուսումնասիրվում են* | Ձեր դրամաշնորհառուի համաձայնագիրը և W-9 ձևը հասանելի են DocuSign-ի փաստաթղթի տեսքով Դիմումների պորտալում: | Մուտք գործեք Դիմումների պորտալ և հետևեք DocuSign-ի ցուցումներին՝ երկու փաստաթղթերում ձեր անվան սկզբնատառերը, ստորագրությունը և ամսաթիվը դնելու համար: Կարևոր նշում. Ձեր միջոցները ձեզ չեն տրամադրվի այնքան ժամանակ, քանի դեռ չի ստորագրվել դրամաշնորհառուի համաձայնագիրը: Դրամաշնորհառուները, ովքեր չեն ստորագրել իրենց դրամաշնորհառուի համաձայնագիրը, կարող են զրկվել իրենց դրամաշնորհից, համաձայնագիրը կարող է չեղարկվել, և/կամ դիմումը Ծրագրի կողմից կարող է մերժվել: |
| *Դրամաշնորհի փաստաթղթերը ստացվել են* | Մենք ստացել ենք ձեր ամբողջությամբ ձևակերպված դրամաշնորհառուի համաձայնագիրը: Ձեր բանկային տվյալները կանցնեն վերջին վավերացումը՝ նախքան ֆինանսավորելը: Դուք կստանաք դրամական միջոցները ACH-ի միջոցով: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Lendistry-ն ձեզ հետ կկապվի միայն այն դեպքում, երբ ձեր բանկային հաշվին ACH փոխանցումը կարգավորելու հետ կապված խնդիրներ լինեն: |
| *Դրամաշնորհի ֆինանսավորումը կատարվել է* | Ձեզ տրամադրվել է դրամաշնորհի ամբողջական ֆինանսավորումը, որի համապատասխանության պահանջները բավարարել եք: | Հայտատուի կողմից լրացուցիչ գործողություններ չեն պահանջվում: Նրա գործն այժմ փակված է: |

# Ինչպես վերացնել ձեր հաշվի հետ կապված խնդիրները

SMALL BUSINESS
DISASTER RECOVERY FUND

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Ի՞նչ է պետք անել, եթե ձեր էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել Դիմումների պորտալում

Եթե ձեր էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել Դիմումների պորտալում, հնարավոր է՝ դուք չունեք հաշիվ կամ օգտագործում եք սխալ էլփոստի հասցե մուտք գործելու համար:

1. Դիմում բացելու համար ձեզանից պահանջվում է ստեղծել հաշիվ Դիմումների պորտալում՝ գրանցելով վավերական էլփոստի հասցե և բջջային հեռախոսահամար (տե՛ս 23-րդ էջը տեղեկության համար): Եթե դուք հաշիվ չեք ստեղծել, խնդրում ենք ստեղծել այն՝ սեղմելով **«Չունե՞ք հաշիվ: Գրանցվե՛ք:»**:

2. Եթե դուք արդեն ունեք հաշիվ, սակայն ձեր էլփոստի հասցեն հնարավոր չէ գտնել, հնարավոր է՝ դուք օգտագործել եք սխալ էլփոստի հասցե՝ մուտք գործելու համար: Խնդրում ենք համոզվել, որ այն ճիշտ եք մուտքագրել: Եթե այս խնդիրը շարունակվի, խնդրում ենք կապվել մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ **855-476-5870** հեռախոսահամարով:

   Ձեր էլ. հասցեն մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնից ստանալու համար ձեզանից կարող է պահանջվել հաստատել որոշակի տեղեկատվություն, որը կարող է ներառել, առանց սահմանափակման, ձեր ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվը և սոցիալական ապահովության համարի կամ հարկային նույնականացման համարի վերջին չորս թվանշանը:


***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***




# Սխալ գաղտնաբառ

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION

## Ի՞նչ անել, եթե գաղտնաբառը սխալ է

Եթե ձեր մուտքագրած գաղտնաբառը սխալ է, ստուգեք ուղղագրությունը և կրկին փորձեք: Դուք ունեք գաղտնաբառի մուտքագրման հինգ փորձ՝ նախքան ձեր հաշիվը կկողպվի:

**Մենք խստորեն խորհուրդ ենք տալիս երկրորդ անհաջող փորձից հետո անմիջապես վերադնել ձեր գաղտնաբառը:**

**Ինչպես վերադնել գաղտնաբառը.**

1. Սեղմեք «Մոռացե՞լ եք ձեր գաղտնաբառը»:
2. Մուտքագրեք ձեր հաշվում գրանցված էլփոստի հասցեն:
3. Ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի վեցանիշ հաստատման կոդ: Մուտքագրեք կոդը՝ ձեր հաշիվը հաստատելու համար:
4. Մուտք գործեք և հաստատեք ձեր նոր գաղտնաբառը:




*Շարունակությունը՝ հաջորդ էջում:*

# Ձեր հաշիվը կողպված է

LOS ANGELES AREA
CHAMBER OF COMMERCE
FOUNDATION

## Ի՞նչ է պետք անել, եթե ձեր հաշիվը կողպված է

Ձեր հաշիվը կկողպվի մուտք գործելու հինգ անհաջող փորձից հետո: Դուք կարող եք ապակողպել ձեր հաշիվը՝ պատասխանելով ձեր անվտանգության հարցերին:

### Ինչպես ապակողպել հաշիվը

1. Ընտրեք «Սեղմել այստեղ՝ հաշիվն ապակողպելու համար»:

2. Մուտքագրեք ձեր հաշվում գրանցված անունը, ազգանունը, էլփոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը: Որպեսզի կարողանաք շարունակել, այս տեղեկատվությունը պետք է ճիշտ մուտքագրված լինի: Եթե ձեր հաշվի տվյալները ստուգելու հետ կապված օգնության կարիք ունեք, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ 855-476-5870 հեռախոսահամարով:

3. Ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի վեցանիշ հաստատման կոդ: Մուտքագրեք կոդը՝ ձեր հաշիվը հաստատելու համար:

4. Ճիշտ պատասխանեք անվտանգության հարցերին՝ ապակողպելու համար ձեր հաշիվը: Եթե չեք կարող ճիշտ պատասխաններ տալ, կապ հաստատեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ ձեր անվտանգության հարցերը վերակայելու համար:

   Անվտանգության հարցերը վերակայելու համար ձեզանից կարող է պահանջվել հաստատել որոշակի տեղեկատվություն, որը կարող է ներառել, առանց սահմանափակման, ձեր ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվը և սոցիալական ապահովության համարի կամ հարկային նույնականացման համարի վերջին չորս թվանշանը:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***



# Ձեր հաշիվը կողպված է



## Ինչպես ապակողպել հաշիվը

5. Անվտանգության հարցերին ճիշտ պատասխանելուց հետո ձեր էլփոստին կուղարկվի հաշիվն ապակողպելու հղում:

6. Սեղմեք հղումը՝ ապակողպելու համար ձեր հաշիվը:

7. Ձեր հաշիվն ապակողպելուց հետո դուք կունենաք հնարավորություն մուտք գործել Դիմումների պորտալ՝ օգտագործելով ձեր գոյություն ունեցող գաղտնաբառը կամ վերակայել այն: Խորհուրդ ենք տալիս վերակայել ձեր գաղտնաբառը՝ ձեր հաշիվն ապակողպելուց հետո:

***Շարունակությունը՝ հաջորդ էջում:***











# Հաճախորդների սպասարկման կենտրոն

**855-476-5870**
երկուշաբթի – ուրբաթ
7:00 - 19:00, PT
(Խաղաղօվկիանոսյան ժամանակ)
Փակ է բոլոր դաշնային տոներին:

## Արագ հղումներ

Ծրագրի համառոտ նկարագրություն
Պահանջվող փաստաթղթեր
Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը
Դիմումը ներկայացնելու խորհուրդներ
Ինչպես բացել դիմում
Դիմումի ներկայացման գործընթացը
Ստուգման գործընթացը
Ինչպես վերացնել ձեր հաշվի հետ կապված խնդիրները

SMALL BUSINESS DISASTER RECOVERY FUND
APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

LOS ANGELES AREA CHAMBER OF COMMERCE FOUNDATION